

Digipass GO 3 սարքից օգտվելու կանոնները

ՀԾ-ԻնտերնետԲանկ համակարգից օգտվող հաճախորդների համար բարձր մակարդակի անվտանգություն ապահովելու համար համակարգում կիրառված են VASCO Data Security ընկերության Digipass սարքերը: VASCO Data Security համաշխարհային առաջատարն է on-line համակարգերի համար իդենտիֆիկացիոն սարքեր արտադրող կազմակերպությունների մեջ:



Digipass GO 3 սարքը կարող է գեներացնել համակարգ մուտք գործելու և փաստաթղթերը հաստատելու համար անհրաժեշտ միանգամյա նշանաբաններ:

Ինչպես օգտվել Digipass GO 3 սարքից

Digipass GO 3 սարքը միացնելու կամ անջատելու համար պետք է սեղմել ◀ կոճակը: Եթե սարքի հետ ոչ մի գործողություն չի կատարվում, ապա այն 30 վայրկյան հետո ավտոմատ անջատվում է:

Digipass GO 3 սարքը միացնելուց գեներացվում է 6 նիշանի թիվ: Այդ թիվը կարող է օգտագործվել երկու նպատակով

1. Համակարգ մուտք գործելու համար օգտագործողը բացի իր անուն/նշանաբան գույզից պետք է համապատասխան դաշտում մուտքագրի նաև Digipass GO 3 սարքի գեներացրած թիվը՝ միանգամյա նշանաբանը:
2. Փաստաթուղթը հաստատելու համար օգտագործողը պետք է մուտքագրի Digipass GO 3 սարքի գեներացրած թիվը համապատասխան դաշտում և ստորագրի փաստաթուղթը:

⚠ Ոչ մի դեպքում չի թույլատրվում բացել սարքը կամ ենթարկել ֆիզիկական այլ ազդեցությունների:

Հաճախ տրվող հարցեր

Ի՞նչ անել, եթե սարքի վերադարձրած կողը չի ընդունվում համակարգի կողմից

Եթե սարքի վերադարձրած կողը չի ընդունվում համակարգի կողմից, ապա հնարավոր է, որ այն երկար ժամանակ չօգտագործելու, մի քանի անգամ սխալ կող մուտքագրելու կամ այլ պատճառով արգելափակվել է բանկում: Արգելազերծման համար պետք է դիմել սպասարկող բանկին:

Ի՞նչ անել սարքը կորցնելու դեպքում

Սարքը կորցնելու դեպքում պետք է անհապաղ հայտնել այդ մասին բանկին: